ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2006, 252 էջ։

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Ե., «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հրատ., 2006, 101 էջ։

Արման Կիրակոսյանի «Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության» ժողովածուն ներառել է հեղինակի կողմից 1980-ական և 1990-ական թթ. սկզբին հայերենով և ռուսերենով հրապարակված շուրջ 30 գիտական, գիտահրապարակախոսական, հանրագիտարանային հոդվածներն ու գրախոսական-ները, որոնք նվիրված են Հայկական հարցի պատմության, տերությունների քաղաքա-կանության, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման, 1894-1896 թթ. և Առաջին աշխարհամարտում ու դրանից հետո հայերի ցեղասպանության հարցերին վերաբերող արևմտյան պատմագրության, Եղեռնի միջազգային ճանաչման գործընթացի լուսաբանմանն ու պատմության կեղծարարության քննադատությանը։

Արման Կիրակոսյանի հոդվածներում արծարծված խնդիրների լայն ընդգրկումը, որոնք առ այսօր չեն կորցրել քաղաքական և գիտական այժմեականությունը, պայմա-նավորվում է դեռևս 1960-1970-ական թթ. Խորհրդային Հայաստանում հիմնված և ձևավորված քաղաքական հայագիտության դպրոցի առկայությամբ, որի ներկայացու-ցիչն է նաև գրքի հեղինակը։ Այս ժողովածուն վկայում է այն մասին, որ Ա. Կիրակոս-յանը շարունակում է իր հոր՝ Ջոն Կիրակոսյանի և նրա սերնդակից պատմաբանների գիտահրապարակախոսական գործունեությունը Հայկական հարցի պատմության և հայերի ցեղասպանության պատմության ուղղությամբ։

Գիրքը բաղկացած է 4 գլուխներից, առաջաբանից և վերջաբանից, վերջում զետեղ-ված է Ա. Կիրակոսյանի աշխատությունների ամբողջական ցանկը։ Հեղինակը որպես նախաբան օգտագործել է «Հայկական Հարց» հանրագիտարանում (ռուսերեն՝ Ժ., 1992, հայերեն՝ Ե., 1996) տպագրված «Հայկական հարց» հոդվածը, որը հակիրճ կերպով ընթերցողին է ներկայացնում XIX դ. վերջի – XX դ. հայ ժողովրդի քաղաքական պատ-մության զարգացումները։

Առաջին՝ «Հայկական հարցը 19-րդ դարի երկրորդ կեսին» գլխում Ա. Կիրակոսյանը ընդգրկել է 6 աշխատանք, որոնցից երկուսը՝ «1877-1878 թթ. ռուս-թուրքական պատե-րազմը և Հայկական հարցը» և «Ազգային-ազատագրական շարժումներ» հոդվածները, հանրագիտարանային են, վերցված են «Հայկական Սովետական Հանրագիտարանի» «Սովետական Հայաստան» լրացուցիչ հատորից։ Հիմնականում նախկինում չօգտա-գործված ամերիկյան մամուլի նյութերի հիման վրա գրված «Հայկական հարցը ԱՄՆ-ի ամսագրերի էջերում (19-րդ դարի 90-ական թթ. կեսեր)» և «Աբդուլ Համիդի հակահայ-կական քաղաքականությունն ու 1894-1896 թթ. հայկական կոտորածները» հոդվածները լուսաբանում են 1890-ական թթ. արևմտահայության ծանր վիճակը, հայկական կոտոր-ածները, Աբդուլ Համիդի հակահայկական քաղաքականությունը։ Թուրքագետ Ռ. Սաֆրաստյանի՝ 1985 թ. լույս ընծայած «Օսմանիզմի դոկտրինան Օսմանյան կայսրու-թյան քաղաքական կյանքում (19-րդ դարի 50-70-ական թթ.)» գրքի տեսական վեր-լուծությանն է նվիրված Ա. Կիրակոսյանի «Ուշագրավ ուսումնասիրություն» գրախո-սականը։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում գրքում զետեղված բրիտանական «Քոնթեմփորարի Ռեվյու» ամսագրում 1896 թ. տպագրված՝ Ավ. Նազարբեկյանի

«Զեյթուն» հոդվածի հայերեն թարգմանությունը, որը Ա. Կիրակոսյանի առաջաբանով առաջին անգամ հրապարակվել է 1990 թ. «Երեկոյան Երևան» թերթում:

«Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» գլխում, բացի «Առաջին համաշխարհային պատերազմը և Հայաստանը» հանրագիտարանային հոդվածից, ներառված են պատմաբանի՝ հայերի ցեղասպանության արևմտյան պատմագրության տեսությանը վերաբերող աշխատանքներ: Առաջին համաշխարհային պատերազմի շրջանի գերմանական աղբյուրների, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի՝ Հայկական հարցի պատմագրության լուսաբանմանն են նվիրված Ա. Կիրակոսյանի մյուս երկու աշխատանքները, որոնցից առաջինը Ստ. Ստեփանյանի 1991 թ. հրատարակած փաստաթղթերի և նյութերի ժողովածուի գրախոսականն է: Խիստ հետաքրքիր է գիտաքաղաքական այժմեականությունն այսօր էլ չկորցրած, խորհրդային “Вопросы истории” գիտական ամսագրում Զ. Կիրակոսյանի և Ա. Միհրանյանի համահեղի նակությամբ 1986 թ. հրապարակված «Օսմանյան կայսրության հայերի 1915-1916 թթ. ողբերգությունը արևմտյան պատմագրության լույսի ներքո» հոդվածը:

Երրորդ գլուխը նվիրված է տերությունների քաղաքականությանը Հայկական հարցում: Ընթերցողը հնարավորություն է ստացել հարուստ տեղեկություններ քաղելու «Մեծ Բրիտանիան և Հայկական հարցը», «Ավստրո-Հունգարիան և Հայկական հարցը» (համահեղինակ՝ Ա. Օհանջանյան), «Իտալիան և Հայկական հարցը» (համահեղինակ՝ Ս. Մանուկյան), «Հայկական Հարց» հանրագիտարանի հոդվածներից, «1895-1897 թթ. Մերձավորարևելյան ճգնաժամը, Հայաստանը և ԱՄՆ-ի քաղաքականությունը», «Ավստրո-Հունգարիայի քաղաքականությունը Հայկական հարցում (1895-1897)» գիտական աշխատանքներից, Ա. Նասիբյանի՝ 1984 թ. հրատարակած «Բրիտանիան և Հայկական հարցը 1915-1923 թթ.» գրքի գրախոսականից, ինչպես նաև Հայկական հարցում Ռուսաստանի քաղաքականությանը նվիրված՝ հայտնի պատմաբան, արվեստագետ և թատերագետ, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ա. Ջիվելեգովի 1917 թ. արտասանած ելույթից (որն, ի դեպ, առաջին անգամ հրապարակել է Ա. Կիրակոսյանը, 1992 թ. “Эпоха” թերթում):

Ժողովածուի չորրորդ գլխում Արման Կիրակոսյանը ընդգրկել է Եղեռնի միջազգային ճանաչման և պատմության կեղծարարության խնդիրների լուսաբանմանը վերաբերող հետևյալ հոդվածները. «Ժողովուրդների մշտական ատյանը հայերի ցեղասպանության մասին», «Եվրոպական խորհրդարանի բանաձևը «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» (համահեղինակ՝ Ռ. Սաֆրաստյան), «Հայկական ցեղասպանության հարցը «թուրքական ուղերձի» ծուռ հայելու մեջ» (համահեղինակ՝ Ռ. Սաֆրաստյան), «Հայերի ցեղասպանությունը և օսմանյան արխիվները» (համահեղինակ՝ Ռ. Սաֆրաստյան), «Ոճրագործությունը մոռացված չէ» (համահեղինակ՝ Ռ. Սաֆրաստյան), «Փաստաբան Դե Մալվիլի պասկվիլը» (համահեղինակ՝ Ռ. Սահակյան), «Լեռնային Ղարաբաղի հարցում Թուրքիայի զանգվածային լրատվամիջոցների դիրքորոշման մասին» (համահեղինակներ՝ Լ. Էյրամջյանց, Ռ. Սաֆրաստյան), «Ջոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գրքի վերջաբանը»:

Պատմաբանը, որպես ժողովածուի վերջաբան, օգտագործել է 1955 թ. Սղերդի (Թուրքիա) քրդաբնակ Շիրնակ գյուղում ծնված, հայազգի Ն. Չաքմաքջյանի՝ 1982 թ. Հայաստանի արտաքին գործերի նախարար Զ. Կիրակոսյանին ուղղած նամակը, որն առաջին անգամ Ա. Կիրակոսյանի և Գ. Ասատրյանի առաջաբանով հրապարակվել է 1989 թ., «Գրական թերթում»:

Ժողովածուն ընթերցվում է հետաքրքրությամբ, պարունակում է զգալի փաստագրական և տեսական նյութ, կարող է օգտակար լինել հայ ժողովրդի քաղաքական պատմության, խորհրդային շրջանի և պատմագրության մասնագետների, թուրքագետների, միջազգայնագետների, դիվանագետների, ուսանողների ինչպես նաև հանրապետության և սփյուռքի ընթերցող լայն շրջանների համար։ Նշենք, սակայն, որ հեղինակը գրքում չի ընգրկել իր հեղինակած մի շարք հոդվածներ, մասնավորապես, «Հայկական հարցում ռուս-անգլիական հարաբերությունների պատմությունից», «Անգլո-թուրքական հարաբերությունները և բարենորոգումների խնդիրը Արևմտյան Հայաստանում (1895 թ.)», «1896 թ. Կոստանդնուպոլսի ջարդի շուրջ», «1896 թ. անգլո-ռուսական բանակցությունները և Հայկական հարցը», «Բրիտանական դիվանագիտությունը և հայկական բարենորոգումների խնդիրը 1912-1914 թթ.» և մի քանի այլ աշխատանքներ (տե՛ս Ա. Կիրակոսյանի աշխատությունների ցանկը, էջ 252-259)։ Թեև հեղինակը առաջաբանում նշում է, որ «գրքի մաս չեն կազմել գիտական այն հոդվածները, որոնք հետագայում ընդգրկվել են հեղինակի հրապարակած մենագրություններում» (էջ 3), այդուհանդերձ, այդ հոդվածները կարող էին ընթերցողին էլ ավելի ամբողջական պատկերացում տալ Ա. Կիրակոսյանի գիտական գործունեության մասին։

Պատմաբան և դիվանագետ Ա. Կիրակոսյանը «Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը» պատմահիրավական եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) աշխատության մեջ պատմագիտական տեսանկյունից ցույց է տալիս Հայկական հարցի սկզբնավորումը։ Նա գրում է. «Հայկական հարցը, որի առաջացումն ի սկզբանե պայմանավորված էր հայկական պետականության անկումով, իսկ հետագայում՝ XIX դ. 70-ական թթ. սկսած, Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի վիճակի կտրուկ վատթարացումով և ազգային ինքնագիտակցության զարթոնքով, դարձավ արևելյան հարցի բաղկացուցիչ մասը, կարևոր տեղ գրավեց միջազգային հարաբերություններում, մեծ տերությունների մերձավորարևելյան քաղաքականության մեջ, Օսմանյան կայսրությունում ազդեցության ոլորտների և նրա տիրույթների բաժանման համար նրանց պայքարում» (էջ 3)։

Հեղինակը մատնանշում է, որ պատմական Հայաստանի արևմտյան ու արևելյան հայաբնակ հատվածները պայմանականորեն անվանվում են Արևմտյան Հայաստան և Արևելյան Հայաստան։ Արևմտյան Հայաստան անվանումը գիտական ու քաղաքական շրջանառության մեջ է մտել դեռևս 387 թվականից ի վեր, երբ Մեծ Հայքի թագավորությունը բաժանվել էր Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև։ Արևմտյան Հայաստանը Թուրքիայի տիրապետության տակ է ընկել 1555 թ. Պարսկաստանի հետ կնքված Ամասիայի պայմանագրով, իսկ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին է անցել 1828 թ. Պարսկաստանի հետ կնքված Թուրքմենչայի պայմանագրով։ Աշխատությունում Ա. Կիրակոսյանը իրեն հատուկ գիտականությամբ է բնութագրում Հայկական հարցը. «Հայկական հարցը հայ ժողովրդի քաղաքական պատմության, այն է՝ օտարների տիրապետությունից Հայաստանի ազատագրման, Հայկական լեռնաշխարհում ինքնուրույն հայկական պետականության վերականգնման, հայ ժողովրդի համախմբման և այդ նպատակին հասնելու համար մղված հայ ազգային-ազատագրական պայքարի հիմնահարցերի ամբողջությունն է» (էջ 5)։ Հայկական հարցին, Հայոց ցեղասպանությանն ու միջազգային ճանաչման ներկայիս գործընթացին վերաբերող խնդիրները հեղինակը դիտարկում է դիվանագիտական պատմության և իրավապայմանագրային տեսանկյունից։ Սա կարևոր հրատարակություն է, քանի որ, հիմնվելով գիտական ուսում-

նասիրությունների, պատմական փաստերի և դիվանագիտական փաստաթղթերի վրա, հեղինակը կարողացել է շուրջ 40 էջի սահմաններում ստեղծել յուրատեսակ ամփոփ մի ուղեցույց ինչպես մեր պաշտոնյաների, դիվանագետների, ուսանողների, այնպես էլ օտարերկրյա մասնագետների, դիվանագետների և քաղաքագետների համար։ Կառաջարկեինք, որ «Նորավանք» հիմնադրամը կազմակերպեր տեղեկանքի՝ նաև այլ լեզուներով թարգմանությունն ու հրատարակումը։

Գիտնականի, պատմաբանի ու դիվանագետի հրապարակած աշխատությունները մեծ հետաքրքրությամբ կարող են ընթերցել հասարակության ամենալայն շրջանները։

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ս. Ս.
Պատմական գիտությունների դոկտոր